

Արմեն ՊՈՂՈՍՅԱՆ

Երևանի պետական լեզվա հասարակագիտական համալսարան

ՀԻԵՐՈՂԻՖՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ներկայացված է աշխարհի հնագույն գրերից մեկը՝ չինարեն հիերոգլիֆները: Տրվում է հիերոգլիֆների դասավանդման մանրամասն նկարագիր: Ներկայացված են հիերոգլիֆների դասավանդման դյուրին և հիմնավոր մեթոդներ: Ներկայացված են ինչպես տեսական, բացատրական մեթոդներ, այնպես էլ՝ գործնական: Խոսվում է նաև բառի և ձևային մասին, նշելով, որ չինարենում ինչպես բառերը, այնպես էլ ձևայինները ներկայանում են հիերոգլիֆների տեսքով: Հոդվածում փրվում է բացատրություն, թե ինչ մեթոդով փարանջատել բառը ձևային:

Բանալի բառեր. հիերոգլիֆներ, կառուցվածքային մասնիկներ, դասավանդման մեթոդ, բառ, ձևային, գրության կանոններ

Չինական հիերոգլիֆները աշխարհի հնագույն գրերից են, որոնք յուրօրինակ ձևով արտահայտում են չինական մշակույթը: Դրանք չինարենի հիմքն են կազմում: Ուսումնասիրելով հիերոգլիֆները, ծանոթանալով նրանց ձևավորումնաճը և կառուցվածքին՝ միաժամանակ ծանոթանում ենք չինական մշակույթին, քանի որ դրանք վերջինիս անբաժանելի մասն են կազմում:

Հիերոգլիֆները դարերի խորքից եկած չինարենի գրավոր նշաններն են, որոնք ժամանակի ընթացքում կրել են էվոլյուցիոն փոփոխություն՝ պատմության տարբեր փուլերում ունեցել են գրության տարբեր ձևեր և կանոններ: Այսօրվա գրելաձևը ամբողջությամբ տարբերվում է ոսկորների կամ կրիայի պատյանի վրա գրված գրերից: Չնայած պատմության ընթացքում հիերոգլիֆի գրելաձևը կրել է բավականին մեծ փոփոխություններ, սակայն իմաստային առումով հիմնականում մնացել է անփոփոխ:

Հիերոգլիֆները այսպես կոչված նշանագրեր են, որ արտահայտում են գաղափարներ, այդ պատճառով կոչվում են գաղափարագրեր, դրանք իրենց ծագման սկզբնական փուլում մեծ մասամբ եղել են պատկերագրեր: Սրանով է պայմանավորված այն, որ հիերոգլիֆները ոչ թե հնչյունային համակարգի պատկանող գրեր են, այլ իմաստային /王 小 飞, 段 文 彬, 2012: 151-152/: Հնչյունային համակարգի պատկանող լեզուներում, օրինակ՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլն, ամենափոքր գրավոր նշանները տառերն են, որոնք զուրկ են գաղափարից:

Չինարենի դասավանդման ժամանակ չի կարելի միայն առաջնորդվել հնդեվրոպական լեզուների ուսուցման մեթոդներով, հարկավոր է հաշվի առնել նաև չինարենի առանձնահատկությունները թե՛ գրավոր խոսքում, թե՛ բանավոր:

Սույն հոդվածի նպատակն է ՀՀ-ում բարձրացնել չինարենի դասավանդման մակարդակը՝ այն դարձնելով առավել համակարգված, ամբողջական և արդյունավետ: Չինարենի ուսուցումը կազմակերպելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հիերոգլիֆների կառուցվածքի, էվոլյուցիոն փոփոխությունների, արտասանության, ինչպես նաև գրելաձևի կանոններին: Հաշվի առնելով վերոնշյալը՝ հիերոգլիֆների դասավանդման ժամանակ արդյունավետ կլինի առաջնորդվել հետևյալ մեթոդներով:

Ցուցադրական-բացատրական մեթոդ

Հիերոգլիֆները սովորեցնելիս շատ կարևոր է տալ դրանց կառուցվածքային բացատրությունը: Հիերոգլիֆի իմաստն ավելի լավ հասկանալու համար նախ պետք է ընկալել նրա կառուցվածքը: Հիերոգլիֆներն իրենց ծագման սկզբնական փուլում եղել են պատկերագրեր: Այսինքն՝ հիերոգլիֆի գրային կառուցվածքի և արտահայտած իմաստի միջև կա անմիջական կապ: Ըստ գրային կառուցվածքի՝ կարելի է դատել նրա արտահայտած իմաստի մասին /李华强, 2018: 3/: Սակայն ժամանակի ընթացքում հիերոգլիֆների մեծ մասի գրելաձևը այնքան է փոփոխության ենթարկվել, որ այսօրվա գծապատկերից դժվար է կռահել նրա արտահայտած իմաստը: Այդ պատճառով անհրաժեշտ է հնարավորինս ներկայացնել և բացատրել հիերոգլիֆների նախնական տեսքը և կրած փոփոխությունները:

Ստորև ձախից աջ պատկերված են հիերոգլիֆների այսպես կոչված էվոլյուցիոն փոփոխությունները:


Գծապատկեր 1 *արև*



<https://t.388g.com/wenzitupian/xiangxing/2016/1101/10951.html>, 19.08.18./

Գծապատկեր 2 *լուսին*


字源演变:



<https://zhidao.baidu.com/question/337635766.html>, 19.08.18./

Ինչպես տեսնում ենք, արև և լուսին հիերոգլիֆները սկզբնական փուլում շատ նման են եղել արևի և լուսնի, սակայն այսօրվա գրելաձևը շատ է հեռացել սկզբնականից և այդ հիերոգլիֆների ժամանակակից ձևը այդքան էլ չի հիշեցնում արև կամ լուսին:

Գծապատկեր 3 ծառ



[/https://t.388g.com/wenzitupian/xiangxing/2016/1101/10949.html](https://t.388g.com/wenzitupian/xiangxing/2016/1101/10949.html), 19.08.18./

Գծապատկեր 4 արմատ



[<http://image.baidu.com/search/index?tn=wisepadsearch&ie=utf8&fmpage=search&os=rstop&word=%E6%9C%AC%E6%BC%94%E5%8F%98&tn=baiduimage>, 19.08.18.]

Ծառ և արմատ հիերոգլիֆները թե՛ իրենց սկզբնական տեսքով, թե՛ ժամանակակից շատ նման են: Այստեղ հիմնական տարբերությունն այն է, որ արմատ բառի ներքևի հատվածում ավելացված է հորիզոնական գծիկ, որը ցույց է տալիս հողի տակ ծառի արմատը, ինչն էլ մատնանշում է հիերոգլիֆի հիմնական իմաստը: Այս հիերոգլիֆը շատ բազմիմաստ է, բացի արմատ իմաստից այն նշանակում է նաև հիմք, սկիզբ և այլն:


Գծապատկեր 5 ջուր



[<http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=1&cl=2&ie=gb18030&word=%CB%AE%D7%D6%B5%C4%D1%DD%B1%E4%B9%FD%B3%CC%CD%BC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2>, 19.08.18.]

Ջուր հիերոգլիֆը իր սկզբնական փուլում նման է հոսող առվակի, սակայն ժամանակի ընթացքում բավականին փոփոխություններ է կրել և այսօրվա պատկերը այդքան էլ ջուր չի հիշեցնում:

Գծապատկեր 6 մեքենա



[/http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=1&cl=2&ie=gb18030&word=%B3%B5%D7%D6%B5%C4%D1%DD%B1%E4%B9%FD%B3%CC%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000,19.08.18./](http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=1&cl=2&ie=gb18030&word=%B3%B5%D7%D6%B5%C4%D1%DD%B1%E4%B9%FD%B3%CC%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000,19.08.18./)

Մեքենա հիերոգլիֆի սկզբնական պատկերագիրը նույնպես ցույց է տալիս առարկան, պատկերված անիվները հենց խոսում են կառքի կամ սայլի մասին, սակայն այսօրվա վերջնական տեսքը շատ տարբեր է սկզբնականից և թվում է, թե մեքենա բառի հետ ոչ մի ընդհանուր բան չունի:

Այսպիսով, ցուցադրական-բացատրական մեթոդը թույլ է տալիս նախ ծանոթանալ հիերոգլիֆի սկզբնական փուլի կառուցվածքին, այսպես կոչված պատկերագրին, որը մեզ հուշում է նրա իմաստը կամ պատկերում գաղափարը, ինչի արդյունքում այս բարդ, հաճախ նաև բազմիմաստ հիերոգլիֆի ուսուցումը դառնում է ավելի դյուրին և մատչելի:

Հիերոգլիֆի իմաստի և հնչյունային կազմի համադրման մեթոդ

Հիերոգլիֆների դասավանդումը կազմակերպելիս շատ կարևոր է համատեղել ամեն մի հիերոգլիֆի գրելաձևը, արտահայտած իմաստը և հնչյունային կազմը /吕登峰, 2018: 20/: Փորձը ցույց է տալիս, որ հաճախ ուսանողը կարողանում է կարդալ հիերոգլիֆը, բայց չի ընկալում իմաստը: Լինում է և հակառակը. հասկանում է իմաստը, բայց չգիտի, թե ինչպես է այն արտասանվում, այսինքն՝ չի կարողանում կարդալ արդեն իսկ սովորած հիերոգլիֆը: Այս երևույթը չինարենի առանձնահատկություններից է: Եվրոպական լեզուները առանձնանում են տառային համակարգով: Արդյունքում սովորողները կարող են բառի իմաստը չհասկանալ, սակայն կարողանալ կարդալ:

Չինարենում ամեն մի հիերոգլիֆ իր արտասանական ձևում համապատասխանում է մեկ վանկի (չինարենի մեկ վանկում կարող է լինել մեկից ավելի, երկու, նույնիսկ երեք ձայնավոր), սակայն արտասանական ձևը հիերոգլիֆի հետ հանդիպում է միայն դասագրքերում, իսկ գիտա-

տեխնիկական գրքերում, գեղարվեստական գրականությունում, թերթերում և այլն գրվում են միայն հիերոգլիֆները: Այդ պատճառով կարևոր է ուշադրություն դարձնել ուսուցման այս մեթոդին. ցույց տալով գծապատկերը՝ բացատրել իմաստը և այն համադրել արտասանական ձևի հետ, չէ որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե տառերին, որոնք հնարավոր է հեշտությամբ կարդալ, այլ գաղափարագրերին, որոնք անհրաժեշտ է ընկալել և մտապահել ձևը, իմաստը և արտասանությունը:

Կան բավականին մեծ թվով բառեր, որոնք իրենց արտասանական ձևում միմյանց շատ նման են, սակայն իմաստով շատ տարբեր են, օրինակ՝

介绍 (jièshào) ներկայացնել

接受 (jiēshòu) ստանալ

教授 (jiàoshòu) պրոֆեսոր

Ուսանողները հաճախ են սխալներով կարդում, շփոթում արտասանությունն ու իմաստները: Այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս հնչյունային կազմով իրար շատ նման բառերը հստակ տարբերել միմյանցից և ճիշտ կարդալ:

Հիերոգլիֆների գրության կանոնների մեթոդ

Սկսած 2010թ.-ից Վ.Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում կատարած դասալսումների ժամանակ ակնհայտ է դարձել, որ ուսանողների մեծ մասը չի պահպանում հիերոգլիֆների գրության կանոնները: Նրանք գրում են անկանոն, չհամակարգված, ոմանք նույնիսկ սկսում են գրել վերջից: Նրանք մտածում են միայն վերջնական տեսքը ստանալու մասին: Սակայն պետք է հասկանալ, որ ամեն մի հիերոգլիֆ ունի իր գրության կանոնները: Մասնիկները, որոնցով գրվում կամ կազմվում են հիերոգլիֆները, ունեն իրենց հերթականությունը /陈绂, 2009: 40/: Եթե ձգտում ենք գրելու գրագետ և կանոնակարգված, անհրաժեշտ է իմանալ և հետևել այդ կանոններին: Յուրյ տանք օրինակի վրա.

Գծապատկեր 7 կրակ

、 丿 丶 火

[<http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=-1&cl=2&ie=gb18030&word=%BB%F0%D7%D6%B5%C4%B1%CA%CB%B3%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000,19.08.18.>]

Գծապատկեր 8 հյուսիս



[<http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=-1&cl=2&ie=gb18030&word=%B1%B1%D7%D6%B5%C4%B1%CA%CB%B3%CD%BC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000,19.08.18>]

Գծապատկեր 9 հարցնել



[<http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=-1&cl=2&ie=gb18030&word=%BA%C3%D7%D6%B5%C4%B1%CA%CB%B3%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=0,19.08.18.>]

Գծապատկեր 10 դիմավորել



[<http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=-1&cl=2&ie=gb18030&word=%D0%C2%D7%D6%B5%C4%B1%CA%CB%B3%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=,19.08.18.>]

Հիերոգլիֆների յուրաքանչյուր մասնիկ ունի իր ձևը և անունը: Հաջորդիվ ներկայացվում են այն մասնիկները, որոնցով կազմվում են հիերոգլիֆները:

Գծապատկեր 11



[<https://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=1&cl=2&ie=gb18030&word=%B1%CA%BB%AD%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=11111,19.08.18.>]

Նշենք, որ ուսանողներից շատերը մասնիկները գրում են ոչ հստակ, որոշ դեպքերում էլ կիսատ, օրինակ՝ գրելով «ուսուցիչ» բառի առաջին հիերոգլիֆը՝ «老», հիերոգլիֆը կազմող «L» մասնիկի փոխարեն գրում են «L», չնշելով վերև բարձրացող մասը և այլն:

Եթե ուսուցման սկզբում հիերոգլիֆները սկսում են գրել խառը և անկանոն, ժամանակի ընթացքում դա դառնում է սովորություն, որից հետագայում դժվար է ձերբազատվել:

Առաջնորդվելով հիերոգլիֆների գրության կանոնների մեթոդով՝ կարելի է տարբերակել հիերոգլիֆների կառուցվածքային տարրերը, դրանց դասավորվածությունը, որոնք կարող են լինել ինչպես աջից ձախ, այնպես էլ վերևից ներքև: Գրության կանոններին հետևելը մեզ օգնում է հստակ պատկերացում կազմել հիերոգլիֆի կառուցվածքի մասին, ինչը թույլ է տալիս հետագայում ավելի հեշտությամբ յուրացնել նոր հիերոգլիֆներ: Տեսական, բացատրական մեթոդներից բացի կարևոր է նաև գործնական գրավոր մեթոդների կիրառումը:

Գործնական մեթոդներ

Հիերոգլիֆների գրությունն ըստ տառադարձության

Այս մեթոդի ժամանակ ներկայացված է հիերոգլիֆի տառադարձությունը՝ հնչյունային կազմը և արտասանությունը, պահանջվում է գրել համապատասխան հիերոգլիֆը, օրինակ՝

- hěn (շատ)
- jīngcháng (հաճախ)
- yóuyǒng (լողալ)
- zìxíngchē (հեծանիվ)

Տառադարձության գրությունը ըստ հիերոգլիֆների

Այս մեթոդը հակադիր է նախորդին. տրվում է հիերոգլիֆը, պահանջվում է գրել տառադարձությունը՝ նշելով համապատասխան արտասանության տոնը /刘珣, 2010: 22/: Այս մեթոդի կիրառումը օգնում է ուսանողին գրել հիերոգլիֆի հնչյունային կազմը, ինչպես նաև նշել ճիշտ տոնը, քանի որ չինարենում կան բազմաթիվ հիերոգլիֆներ, որոնք հնչյունային կազմով նույն են, սակայն տարբերվում են արտասանական տոներով: Եթե հստակ չիմանանք հիերոգլիֆի ճիշտ արտասանական տոնը և խոսակցության ժամանակ սխալ արտասանենք, զրուցակիցը կարող է մեզ չհասկանալ: Հետևաբար, այս մեթոդը օգնում է ճիշտ սովորել յուրաքանչյուր հիերոգլիֆի հնչյունային կազմը, արտասանական տոնը, ինչը նպաստում է բանավոր խոսքի ճշտությանը: Օրինակ՝

- 忙 (զբաղված)
- 漂亮 (գեղեցիկ)
- 旅行 (ճանապարհորդել)
- 阅览室 (ընթերցասրահ)

Փոխարինման մեթոդ

Չինարենում բառերը, ինչպես նաև ձևույթները կազմվում են հիերոգլիֆների միջոցով, իսկ յուրաքանչյուր հիերոգլիֆ արտասանական ձևում համապատասխանում է մեկ վանկի: Խոսելով հիերոգլիֆների դասավանդման մեթոդիկայի մասին՝ անհրաժեշտ է հասկանալ ուսումնասիրվող հիերոգլիֆը իրենից ներկայացնում է բառ, թե ձևույթ, կամ ինչպես տարբերել այն հիերոգլիֆները, որոնք անգամ ձևույթներ չեն:

Ինչպես հայտնի է ձևույթը լեզվում արտասանական ձևի և իմաստի միասնության ամենափոքր, այլևս չտրոհվող միավորն է: Դիտարկենք որևէ արտահայտություն և այն տրոհենք ամենափոքր միավորների: Օրինակ «夏天快到了» արտահայտության մեջ «夏»-ը արտահայտում է ամառ իմաստը, հնչյունային կազմն է՝ (xià) նշանակում է՝ այն ձևույթ է: Նշենք, որ բոլոր հիերոգլիֆները չէ, որ իմաստ են արտահայտում կամ բովանդակում են հստակ գաղափար, այսինքն կան հիերոգլիֆներ, որոնք ձևույթներ չեն համարվում, օրինակ՝ «芙», «蝠», «拂» և այլն: Շատ հաճախ երկու հիերոգլիֆներ միանալով նոր արտահայտում են մեկ գաղափար:

Այսպիսով, տարբերելու համար վանկը կամ հիերոգլիֆը ձևույթ է թե ոչ, պետք է տեսնենք, թե արդյոք այն արտահայտում է իմաստ: Իմաստը կարող է լինել կոնկրետ բառային իմաստ կամ վերացական բնույթի քերականական իմաստ: Փոխարինման մեթոդի օգնությամբ կարող ենք որոշել, թե բառակազմության մեջ մտնող բաղադրիչը համարվում է ձևույթ, թե ոչ:

Նախ նշենք, որ ժամանակակից չինարենի բառապաշարի գերակշռող մասը կազմում են երկվանկանի բառերը: Երկվանկանի կառույցներում առաջին հիերոգլիֆը (բաղադրիչը) փոխարինում ենք մեկ այլ հիերոգլիֆով, եթե ստացված նոր երկվանկանի կառույցը արտահայտեց նոր իմաստ, նշանակում է չփոխարինված հիերոգլիֆը ձևույթ է: Այսպես կարող ենք ստուգել նաև երկրորդ հիերոգլիֆը: Եթե երկվանկանի կառույցում բաղադրիչներից ոչ մեկը հնարավոր չէ փոխարինել մեկ այլ հիերոգլիֆով, նշանակում է երկու բաղադրիչներն էլ ձևույթ չեն: Փոխարինման մեթոդի ժամանակ միշտ պետք է ուշադրություն դարձնել բաղադրիչի իմաստի վրա: Անհրաժեշտ է նշել, որ ստուգիչ, այսինքն նոր փոխարինող բաղադրիչը իմաստային առումով պետք է լինի միաբնույթ: /ZhouYimin, 2011: 142/: Օրինակ՝ «外语» բառը, որ նշանակում է օտար լեզու: Այստեղ առաջին բաղադրիչը «外» արտասանվում է (wài), նշանակում է դուրս, արտաքին: Երկրորդ բաղադրիչը՝ «语» արտասանվում է (yǔ) նշանակում է լեզու: Այս կառույցում «外»-ը կարող ենք փոխարինել «英», «俄», «法» բաղադրիչներով: Արդյունքում կկազմավորվեն նոր բառեր՝ «英语» անգլերեն, «俄语» ռուսերեն, «法语» ֆրանսերեն բառերը:

«语» բաղադրիչը կարող ենք փոխարինել «国» «边» «事» բաղադրիչներով այս դեպքում կստանանք «外国» օտար երկիր «外边» դրսի կողմ «外币» արտարժույթ:

Նկատելի է, որ փոխարինման բոլոր դեպքերում «外» հիերոգլիֆը արտահայտում է միևնույն իմաստը: Նույնը կարող ենք ասել և «语» հիերոգլիֆի դեպքում, այսինքն երկու բաղադրիչներն էլ ունեն իմաստ, ուստի համարվում են ձևային:

Դիտարկենք «芙蓉» (հիբիսկուս) բառը (արտասանվում է fúróng): Այստեղ «芙» բաղադրիչը չենք կարող փոխարինել մեկ այլ բաղադրիչով: Չենք կարող փոխարինել նաև երկրորդ՝ «蓉» բաղադրիչը, նշանակում է երկուսն էլ ձևային չեն համարվում:

Պետք է նշել, որ փոխարինման մեթոդն ունի որոշ սահմանափակումներ: Չինարենում կան ձևայիններ, որոնք միայն մեկ բառում են հանդիպում, օրինակ՝ «蓖麻» (գերչակ) բառում «蓖» բաղադրիչը, «痙挛»

(սպազմ) բառում «挛» բաղադրիչը: Այստեղ չենք կարող կիրառել փոխարինման մեթոդը, քանի որ վերոնշյալ բաղադրիչները (հիերոգլիֆները) հանդիպում են միայն այդ բառակազմության մեջ, այսինքն՝ ուրիշ հիերոգլիֆների հետ չեն միանում բառեր կազմելու: Սակայն առանձին վերցրած դրանք ունեն իմաստներ և համարվում են ձևային:

Ձևային տեսակները

Ըստ բառակազմության՝ չինարենում ձևայինները բաժանվում են երկու տիպի՝ ինքնուրույն գործածություն ունեցող, այսպես կոչված բառ-ձևայիններ և ինքնուրույն գործածությունից զուրկ ձևայիններ: Բառ-ձևայիններն ինքնին բառեր են, դրանք նման են հայերենի այն հիմնական ձևայիններին, որոնք ինքնուրույն գործածություն ունեն, հիմնականում պարզ բառեր են, օրինակ՝ «人» մարդ, «手» ձեռք, «笔» վրձին և այլն:

Այն ձևայինները, որոնք ինքնուրույն գործածություն չունեն, բառակազմության մեջ մտնում են որպես առանձին բաղադրիչ, օրինակ՝ «民» - «民族» ազգ, «基» - «基础» հիմք, «为» -, «认为» կարծել, «恐» - «恐怕» վախենալ:

Ըստ իմաստի՝ ձևայինները լինում են մենիմաստ և բազմիմաստ:

Հաճախ կիրառվող մենիմաստ միավանկ ձևայինները համեմատաբար քիչ են, օրինակ՝

- 爸 - 父亲 (հայրիկ)
- 扩 - 放大 (մեծացնել)
- 技 - 才能 (ընդունակություններ)
- 盲 - 瞎 (կույր):

Առավել մեծ թիվ են կազմում միավանկ բազմիմաստ ձևայինները, օրինակ՝ 水 արտահայտում է հետևյալ իմաստները՝

- խմելու ջուր
- հոսող գետ

- գետ, լիճ, ծով
- հեղուկ
- արժեքից բացի հավելյալ վճար
- հազուստը լվանալու հաճախականություն (այս իմաստով նման է հայերենին, օրինակ ասում ենք. «մի ջուր լվանալ», չինարենում՝ «洗了一水»)

铁 արտահայտում է հետևյալ իմաստները՝

- մետաղ
- կարծր
- ամուր կամք
- անսասան
- լավ պատրաստված
- զենք և այլն:

大

• Ցույց է տալիս ծավալի, մակերեսի, քանակի, աստիճանի համեմատաբար գերազանցող ցուցանիշ

- մեծ ու փոքրի համեմատություն
- խորը
- մեծահասակ
- դրվելով տոներից առաջ՝ շեշտադրում է երևույթը
- առանձին հանդես է գալիս որպես ազգանուն:

• «ոչ» ժխտական մասնիկից հետո նշանակությունը փոխվում է, ցույց է տալիս մակերեսորեն, քիչ քանակի /ZhouYimin, 2011: 143-144/:

Ըստ վանկային կառուցվածքի՝ ժամանակակից չինարենում ձևույթը մեծ մասամբ միավանկ է, օրինակ՝ «天» օր, «地» հող, «水» ջուր, «头» գլուխ «衣» գյուղատնտեսություն և այլն: Կան և երկվանկ ձևույթներ, օրինակ՝ «荒唐» անհեթեթ, «沙发» բազմոց և այլն: Երեք և ավելի վանկերից կազմված ձևույթները հիմնականում այլ լեզուներից փոխառված տառադարձություններ են, այսինքն ոչ թե իմաստային թարգմանություններ, այլ արտասանական ձևի վերարտադրություններ են, օրինակ՝ «法西斯» fǎxīsī ֆաշիստ, «乌鲁木齐» wūlǔmùqí Ուրումչի (քաղաք Չինաստանում, «布尔什维克» bù'ěrsǐwéikè բոլշևիկ և այլն /ZhouYimin, 2011: 142/:

Այսպիսով, հիերոգլիֆների ուսուցումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել վերոնշյալ մեթոդներով՝ կարողանալու համար

- հիերոգլիֆի գծապատկերից անցում կատարել նրա արտահայտած իմաստին,
- ստեղծել կապ հիերոգլիֆի իմաստի և արտասանական ձևի միջև,
- հետևել հիերոգլիֆների կանոնակարգված գրելաձևին,
- չշփոթել տառադարձությունն ու արտասանական տոները,
- կարողանալ տարբերել՝ գծապատկերի տեսք ունեցող հիերոգլիֆը բառ է, թե ձևույթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 王小飞, 段文彬 (2012) 20, 试论汉字是表意体系的文字, 哈尔滨市社会科学院出版, 151
2. 李华强 (2018) 19, 说文解字, 豫内资漯河审字, 3
3. 吕登峰 (2018) 18, 教学方案, 豫内资漯河审字, 20
4. 陈波 (2009) 跟我学汉语, 人民教育出版社, 40
5. 刘珣 (2010) 新实用汉语课本, 北京语言大学出版社, 22
6. Zhou Yimin, (2011) xiandai hanyu, beishida, 142
7. <https://t.388g.com/wenzitupian/xiangxing/2016/1101/10951.html>, [19.08.18.]
8. <https://zhidao.baidu.com/question/337635766.html>, [19.08.18.]
9. <https://t.388g.com/wenzitupian/xiangxing/2016/1101/10949.html>, [19.08.18.]
10. <http://image.baidu.com/search/index?tn=wisepadsearch&ie=utf8&fmpage=search&pos=rstop&word=%E6%9C%AC%E6%BC%94%E5%8F%98&tn=baiduimage>, [19.08.18.]
11. <http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=1&cl=2&ie=gb18030&word=%CB%AE%D7%D6%B5%C4%D1%DD%B1%E4%B9%FD%B3%CC%CD%BC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000>, [19.08.18.]
12. <http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=1&cl=2&ie=gb18030&word=%B3%B5%D7%D6%B5%C4%D1%DD%B1%E4%B9%FD%B3%CC%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000>, [19.08.18.]
13. <http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=-1&cl=2&ie=gb18030&word=%BB%F0%D7%D6%B5%C4%B1%CA%CB%B3%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000>, [19.08.18.]
14. <http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=-1&cl=2&ie=gb18030&word=%B1%B1%D7%D6%B5%C4%B1%CA%CB%B3%CD%BC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000>, [19.08.18.]
15. <http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=1&cl=2&ie=gb18030&word=%BA%C3%D7%D6%B5%C4%B1%CA%CB%B3%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000>, [19.08.18.]
16. <http://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=-1&cl=2&ie=gb18030&word=%D0%C2%D7%D6%B5%C4%B1%CA%CB%B3%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=000000>, 19.08.18.]
17. <https://image.baidu.com/search/index?tn=baiduimage&ct=201326592&lm=1&cl=2&ie=gb18030&word=%B1%CA%BB%AD%CD%BC%C6%AC&fr=ala&ala=1&alatpl=adress&pos=0&hs=2&xthttps=111111>, 19.08.18.]

А. ПОГОСЯН – К вопросу о методах преподавания иероглифов. – В статье представлены китайские иероглифы как одна из древнейших письменностей мира. Дается подробное описание обучения иероглифам. Представлены методы преподавания, руководствуясь которыми, изучение этих сложных иероглифов станет более легким, доступным и основательным. Представлены как теоретические, так и практические методы преподавания. В статье также говорится о слове и морфеме. В китайском языке, как слова, так и морфемы представлены в виде иероглифов. Дается объяснение каким методом отличить слово от морфемы.

Ключевые слова: иероглифы, структурные частицы, методы обучения, слово, морфема, правила написания

A. POGHOSYAN – On methods of Teaching Hieroglyphs. – The paper introduces Chinese hieroglyphs as one of ancient writing in the world. It is given a detail describing of teaching hieroglyphs. According to these compound hieroglyphs teaching will be more simple, available and thorough. It is represented both theoretical and practical methods of teaching. It is spoken about word and morpheme. In China both words and morphemes are represented as hieroglyphs. It is given an explanation by what methods to distinguish the word from morpheme.

Key words: hieroglyphs, structural particles, teaching methods, word, morpheme, rules of writing

Ներկայացվել է՝ 23.04.2019
 Երաշխավորվել է ԵՊԼՀ Ասիական լեզուների կենտրոնի կողմից
 Ընդունվել է տպագրության՝ 23.05.2019